Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի
Մարալիկի «Ռոմի Բարոնյանիանվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի
տնօրենի 2025 թվականի մայիսի «26»-ի N 82 հրամանի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկի «Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

| N | Թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները) | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկի «Ռոմի բարոնյանի անվան մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության<br>1. Մեթոդիստ – 1 դրույք /150000 ՀՀ դրամ աշխատավարձ/<br>2.Դաստիարակ -0.56 դրույք /75600 ՀՀ դրամ աշխատավարձ/<br>3.Հոգեբան -1 դրույք /104000 ՀՀ դրամ աշխատավարձ/: | **1. Որակավորման պահանջները**<br>1.1 Հաստատության մեթոդիստի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:<br>1.2 Հաստատության դաստիարակի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:<br>1.3 Հաստատության հոգեբանի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն մասնագիտական կրթություն:<br><br>**2. Ընդհանրական պահանջները**<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի, դաստիարակի և հոգեբանի պաշտոններ զբաղեցնողները պետք է իմանան պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները.<br>ա. դաստիարակչական հարցերը, ըստ ոլորտի՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, նորմատիվ փաստաթղթերը և մեթոդական հանձնարարականները, մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի և հիգիենայի, առաջին բժշկական օգնության | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը,** որը՝<br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br>2)դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br>3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.<br>4)դատապարտվել է հանցագործության համար և | Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:<br>1) դիմում (Ձև 1).<br>2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).<br>3) անձը հաստատող փաստաթուղթ.<br>4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).<br>5) ինքնակենսագրություն (Ձև 4).<br>6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.<br>7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | հիմունքները, աշխատանքի անվտանգության, երեխաների կյանքի և առողջության պահպանման կանոնները: | դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | հավաստող փաստաթուղթ. 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական. 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում): |
| 2 | **Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը** | **Դիմումների և փաստաթղթերի ընդունումը**<br>ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնք, ք. Մարալիկ Ձերժինսկի 7-7/7 մանկապարտեզ | | **Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները** |
| | **Վայրը՝** ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնք, ք. Մարալիկ, Ձերժինսկի 7-7/7 մանկապարտեզ **Օրը՝** 2025 թվականի **հունիսի 27-ին** ժամը՝ 11:00 | Փաստաթղթերը ներկայացնելու և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկի «Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ<br>**Հեռ. 077-122-800**<br>**Էլ.հասցե՝** mankapartez2023@gmail.com<br>**Մրցույթն անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր:**<br>**Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝** https://escs.am/files/files/2024-10-23/cabaf0475d7f79ebda1d3b036d05e5d0.pdf | | **2025 թվականի մայիսի 27-ից մինչև 2025 թվականի հունիսի 24-ը ներառյալ** |
| | **Մրցույթին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով** | **Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00-18:00, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերից:**<br>**Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել anicity.am** http://shirak.mtad.am **կայքում:** | | |